**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N** 03.02.01-19
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

31.01.2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմ նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վ. Գասպարյանի, ով գործում նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և «Գյումրու պետակա տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ի դեմս հաստատության տնօրեն Մ. Սարգսյանի, ով գործում է հաստատությա կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությա 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Միջին մասնագիտակա կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի շրջանակներում «Գյումրու պետակա տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի միջին տարեկան 138 սովորողների (առանց ընդունելության) ուսուցումը:

**2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

**2.1** Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված ուսանողակա նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցումը կազմում է 49 238 800 (քառասունինը միլիոն երկո հարյուր երեսունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց Պատվիրատուն պարտավորվում է ուսանողակա նպաստի տրամադրման ձևով իրականացնել ուսման վճարի փոխտրամադրված միջոցները վճարում Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

**3. ԱՇԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն պայմանագրի 1.1 կետում նշվա նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխան:

**4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

4.1 Սույն պայմանագիրը գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ու Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005460

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

______________ Վ. Գասպարյան
(ստորագրություն)

Կ.Տ

02693732

**ԿԱՏԱՐՈՂ**

«Գյումրու պետական տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ
Ք.Գյումրի, Տիգրան Մեծի 30
ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900218000785

Տնօրեն՝

______________ Մ. Սարգսյան
(ստորագրություն)

Կ.Տ

05527491